



Ծ Ր Ա Գ Ի Ր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ
ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններում (այսուհետ՝ ՏԻՄ) և համայնքապետարանի աշխատակազմում հակակոռուպցիոն միջոցառումների ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) կազմվել է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից մշակված «Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմիններում ռիսկերի գնահատում իրականացնելու և գնահատման արդյունքում տեղական հակակոռուպցիոն միջոցառումների ծրագիր կազմելու մեթոդաբանություն և գործողությունների ծրագիր» մեթոդական ձեռնարկի հիման վրա:

Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի ՏԻՄ-ում և համայնքապետարանի աշխատակազմում տեղական հակակոռուպցիոն քաղաքականության պատշաճ իրագործման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1871-Լ որոշմամբ հաստատված հավելված 2-ի 1.9-րդ գործողության կիրարկման ապահովումը:

Փաստաթղթում ներկայացվում է նաև ՏԻՄ-ում և աշխատակազմում կոռուպցիոն ռիսկերի գնահատում իրականացնելու մեթոդաբանությունից բխող գործողությունների ծրագիրը, որի հիմնական նպատակն է սահմանել ՏԻՄ-ի այն հիմնական քայլերն ու գործողությունները, որոնց իրականացման արդյունքում կնվազեցվեն ՏԻՄ-ում և աշխատակազմում իրավակիրառական պրակտիկային բնորոշ կոռուպցիոն հնարավոր ռիսկերը:

Համայնքում կոռուպցիոն հնարավոր ռիսկերի համապարփակ գնահատումներ իրականացնելու պարտավորությունը համաձայն ՀՀ կառավարության վերոնշյալ որոշման վերապահվում է տարածքային կառավարման բնագավառի պետական լիազոր մարմնին:

Ծրագրի արդյունավետ աշխատանքը ապահովելու առաջին քայլը տեղական ինքնակառավարման համակարգի այն հիմնական խնդիրների վերհանումն է, որոնք անմիջական աղերս ունեն ՏԻՄ-ում հնարավոր կոռուպցիոն ռիսկերի առաջացման հետ:

- ՏԻՄ-ում կոռուպցիոն ռիսկերի առաջացման հնարավոր պատճառներ կարող են լինել՝
 - ✓ Տեղական ինքնակառավարմանը հանրային մասնակցության ցածր մակարդակը.
 - ✓ Բնակչության իրազեկվածության պակասը ՏԻՄ-ի լիազորությունների վերաբերյալ.
 - ✓ Համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների մատուցման պատշաճ կազմակերպման հետ կապված խնդիրները.
 - ✓ Օրենսդրական խնդիրներ.

Տեղական ինքնակառավարման գործընթացներում կոռուպցիոն հնարավոր ռիսկերի բացառման տեսանկյունից «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված են տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքի հետևյալ հիմնական սկզբունքները.

1. ՏԻՄ-երի գործունեության հաշվետվողականությունը,
2. Հրապարակայնությունը,
3. Թափանցիկությունը,
4. Համայնքի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը,
5. ՏԻՄ-երի սեփական պատասխանատվությունը:

Տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքի սկզբունքների կատարումն ապահովելու և տեղական ինքնակառավարման գործընթացներում կոռուպցիոն հնարավոր ռիսկերի վերահսկողության և բացառման նպատակով անհրաժեշտ է ստեղծել Սևան համայնքի տեղական ինքնակառավարման մարմնում և համայնքի աշխատակազմում կոռուպցիոն ռիսկերի ինքնագնահատման աշխատանքային հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):

Աշխատանքային հանձնաժողովի կազմում ընդգրկվում են՝

- 1) Համայնքի ավագանու անդամ կամ անդամներ.
- 2) Համայնքի ղեկավար.
- 3) Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար.
- 4) Համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսական ոլորտի պատասխանատու.
- 5) Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ.
- 6) Այլ անդամներ՝ ավագանու որոշմամբ.
- 7) Ինքնագնահատման խմբի աշխատանքները համակարգող անձ՝ համայնքի ղեկավարի որոշմամբ:

Տեղական ինքնակառավարման մարմիններում և համայնքապետարանի աշխատակազմում կոռուպցիոն ռիսկերի ինքնագնահատման աշխատանքային հանձնաժողովի ուսումնասիրման և վերահսկման ենթակա ցուցանիշներն են՝

1. «Առաջնորդություն և կառավարում».

- | | |
|--------------|--|
| Ցուցանիշ 1.1 | Համայնքի ավագանու գործունեություն. |
| Ցուցանիշ 1.2 | Համայնքի ղեկավարի գործունեություն. |
| Ցուցանիշ 1.3 | Աշխատակազմի քարտուղարի գործունեություն. |
| Ցուցանիշ 1.4 | Աշխատակազմի գործունեություն. |
| Ցուցանիշ 1.5 | Համայնքի ռազմավարական պլանավորում և տնտեսական զարգացում. |

2. «Ֆինանսական կառավարում».

- | | |
|--------------|---|
| Ցուցանիշ 2.1 | Բյուջեբային գործընթաց և հաշվետվողականություն. |
| Ցուցանիշ 2.2 | Տեղական հարկային վարչարարություն և ֆինանսական անկախություն. |

- Ցուցանիշ 2.3 Գնումներ և պայմանագրերի կատարում.
- Ցուցանիշ 2.4 Եկամուտների հավաքագրում և ծախսերի կատարում.
- Ցուցանիշ 2.5 Համայնքի գույքի կառավարում

3. «Լիազորություններ, հանրային և տեղական ծառայություններ».

- Ցուցանիշ 3.1 Հանրային և տեղական ծառայությունների մատուցման վարչարարություն (ՏԻՄ լիազորություններ և պետական մարմինների ապակենտրոնացված լիազորություններ).
- Ցուցանիշ 3.2 Հանրային և տեղական ծառայությունների մատուցման պլանավորում և իրագործում.
- Ցուցանիշ 3.3 Հանրային և տեղական ծառայությունների համար թույլտվությունների կամ այլ փաստաթղթերի տրամադրում և ծառայությունների դիմաց վճարման ընթացակարգեր.
- Ցուցանիշ 3.4 Հանրային և տեղական ծառայությունների հասանելիություն և բավարարվածություն.
- Ցուցանիշ 3.5 Հանրային և տեղական ծառայությունների որակ, որակի նկատմամբ հսկողություն, որակի գնահատում (մոնիթորինգ).

4. «Հանրային մասնակցություն».

- Ցուցանիշ 4.1 Հանրային մասնակցությանը վերաբերող օրենսդրության պահպանում.
- Ցուցանիշ 4.2 Հանրային մասնակցություն որոշումների կայացմանը և հանրային վերահսկողություն.
- Ցուցանիշ 4.3 ՏԻՄ-ի և համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքի թափանցիկություն/հաշվետվողականություն.
- Ցուցանիշ 4.4 Կանանց/երիտասարդների/խոցելի խմբերի ներգրավում (ներառականություն).
- Ցուցանիշ 4.5 Հանրության հետ հաղորդակցության ապահովում և հանրության իրազեկում.

Հանձնաժողովը գնահատում է նաև տեղական ինքնակառավարման մարմնում և համայնքապետարանի աշխատակազմում գոյություն ունեցող ներքին հսկողական համակարգերը (ավագանու որոշումներ, համայնքի ղեկավարի որոշումներ, կարգեր, կանոնակարգեր, ուղեցույցներ և այլն):

Հանձնաժողովն առաջին հերթին գնահատում է համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական կառավարման հսկողական համակարգերը, որոնք գործող օրենսդրությամբ և տեղական ինքնակառավարման մարմնի կողմից սահմանված կանոնների (քաղաքականության), ընթացակարգերի և գործողությունների ամբողջությունն է, որով ողջամիտ ձևով երաշխավորվում է աշխատակազմի գործառույթների իրականացումը:

Հանձնաժողովի կողմից տեղական ինքնակառավարման մարմնում և համայնքապետարանի աշխատակազմում կոռուպցիոն ռիսկերի գնահատումը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1). տեղական ինքնակառավարման մարմնի կողմից իրականացվող հսկողություն, որն իրենից ներկայացնում է տեղական ինքնակառավարման մարմինների գործողություններ՝

ուղղված համայնքապետարանի աշխատակազմի կոռուպցիոն ռիսկերի կանխմանը կամ նվազեցմանը:

2). կոռուպցիոն ռիսկերի գնահատման անկախություն՝ կոռուպցիոն ռիսկերի գնահատման գործառույթի՝ աշխատակազմի այլ գործառույթներից առանձնացված իրականացում.

3). կոռուպցիոն ռիսկերի գնահատման օբյեկտիվություն՝ հանձնախմբի կողմից կոռուպցիոն ռիսկերի գնահատման ընթացքում տեղեկությունների հավաքագրման, գնահատման և փոխանակման գործընթացում՝ մասնագիտական անվերապահ անշահախնդրության ցուցաբերում.

4). Հանձնաժողովի անդամների ազնվություն՝ հանձնաժողովի անդամների կողմից՝ կոռուպցիոն ռիսկերի առաջացման բոլոր հանգամանքների հավասարակշռված և համարժեք գնահատում՝ չենթարկվելով սեփական հետաքրքրությունների կամ այլ անձանց դատողությունների անհարկի ազդեցությանը.

5). կոռուպցիոն ռիսկերի գնահատման կարողունակություն՝ հանձնաժողովի կողմից համապատասխան գիտելիքների, հմտությունների, փորձառության և գնահատման գործողությունները կատարելու համար՝ անհրաժեշտ կարողությունների տիրապետում և կիրառում.

6). կոռուպցիոն ռիսկերի գնահատման անկողմնակալություն՝ հանձնաժողովի կողմից կոռուպցիոն ռիսկերի գնահատման աշխատանքի ազնիվ և պատասխանատու իրականացում.

7). կոռուպցիոն ռիսկերի գնահատման գաղտնիություն՝ հանձնաժողովի աշխատանքի ընթացքում ստացած տեղեկությունների հուսալի պահպանում, մասնավորապես՝ հանձնաժողովի անդամները պարտավոր են առանց համապատասխան լիազորության՝ չհրապարակել և չտրամադրել գործունեության ընթացքում կամ արդյունքում իրենց հայտնի դարձած տեղեկությունները, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.

8). հանձնաժողովի անդամների վարքագծի կանոններ՝ համայնքային ծառայողների վարքագրի հիման վրա հաստատված հանձնաժողովի անդամների վարքագծի կանոններ, որոնք տարածվում են ինչպես հանձնաժողովի անդամ՝ տեղական ինքնակառավարման մարմնի և աշխատակազմի ներկայացուցիչների, այնպես էլ հրավիրյալ անձանց վրա.

9). կոռուպցիոն ռիսկերի գնահատման կանոնակարգ՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ ավագանու հետ համաձայնեցված փաստաթուղթ, որով սահմանվում են կոռուպցիոն ռիսկերի գնահատման նպատակը, հանձնաժողովի լիազորությունները և պարտականությունները, կոռուպցիոն ռիսկերի գնահատման շրջանակը, հանձնաժողովի կողմից կոռուպցիոն ռիսկերի գնահատման նպատակով անհրաժեշտ փաստաթղթերի, աշխատանքային պայմանների և գույքի հետ կապված հարցերը

10). կոռուպցիոն ռիսկերի գնահատման առաջադրանք՝ կոռուպցիոն ռիսկերի գնահատման կանոնակարգի հիման վրա կոնկրետ կոռուպցիոն ռիսկի գնահատման առաջադրանքի կամ ուսումնասիրության իրականացում:

Հանձնաժողովը տեղական ինքնակառավարման մարմնում և աշխատակազմում կոռուպցիոն ռիսկերի գնահատման արդյունքում ստացված կոռուպցիոն վարկանիշի բարելավման գործողությունների ծրագիրը իրականացնում է՝

1. Տեղական ինքնակառավարման մարմնում և աշխատակազմում կոռուպցիոն ռիսկերի գնահատման արդյունքում ստացված կոռուպցիոն վարկանիշի բարելավման գծով գործողությունների ծրագրի սահմանման համար՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր ցուցանիշի և, հետևաբար, կատեգորիայի գծով ստացված միավորները:

2. Տեղական ինքնակառավարման մարմնում և աշխատակազմում կոռուպցիոն ռիսկերի գնահատման արդյունքում ստացված կոռուպցիոն վարկանիշի բարելավման գծով գործողությունների ծրագրում՝ յուրաքանչյուր ցուցանիշի համար հանձնախմբի կողմից միջոցառումներ սահմանելով:

2.1 Յուրաքանչյուր ցուցանիշի համար կարող է սահմանվել մեկ կամ մի քանի միջոցառում, իսկ յուրաքանչյուր միջոցառման իրագործման համար վերջնաժամկետ, միջոցառումների իրագործման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ և յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու:

Հանձնաժողովի աշխատանքի հիմքերից է համայնքում տեղական ինքնակառավարման մարմնում և աշխատակազմում կոռուպցիոն ռիսկերի վերաբերյալ ազդարարման ներքին համակարգի ստեղծումը և դրա անխափան աշխատանքի ապահովումը.

ա/ տեղական ինքնակառավարման մարմնում և աշխատակազմում կոռուպցիոն ռիսկերի դրսևորումների և դեպքերի ազդարարման համակարգն իրենից ներկայացնում է կոռուպցիոն ռիսկերի դրսևորումների և դեպքերի տեղեկատվության գաղտնի ստացման, տեղեկատվության պահպանման, վերլուծության և վերլուծության հիման վրա որոշումների կայացման համակարգ:

բ/ տեղական ինքնակառավարման մարմնում և աշխատակազմում կոռուպցիոն ռիսկերի դրսևորումների և դեպքերի ազդարարման համակարգում ստացված ցանկացած ազդակ՝ առանց բացառության, պետք է քննարկվի հանձնաժողովի կողմից՝ որոշելու այդ տեղեկատվության հետագա կիրառումը: Այն դեպքերը, որոնք կարող են պարունակել քրեորեն պատժելի արարքներ կամ վարքագիծ կամ գործողություններ, անվերապահորեն պետք է պաշտոնապես տրամադրվեն համապատասխան իրավապահ մարմիններին:

3. Հանձնաժողովի ստեղծումը. հանձնաժողովի կազմը և կառուցվածքը, կանոնադրությունը և գործունեության կարգը՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ, սահմանում է ավագանին, իսկ հանձնաժողովը ապահովում է տեղական ինքնակառավարման մարմնում և աշխատակազմում կոռուպցիոն ռիսկերի դրսևորումների և դեպքերի վերաբերյալ տեղեկատվության գաղտնի ստացման, տեղեկատվության պահպանման, վերլուծության և վերլուծության հիման վրա որոշումների կայացման գործընթացները:

4. Կոռուպցիոն ռիսկերի դրսևորումների և դեպքերի տեղեկատվության գաղտնի ստացման նպատակով՝ տեղական ինքնակառավարման մարմինը սահմանում է տեղեկությունների ստացման գործիքակազմը, մասնավորաբար՝ վեբ-կայքում համապատասխան հարթակ և (կամ) էլեկտրոնային փաստի հասցե և (կամ) թեժ գիծ:

5. Տեղական ինքնակառավարման մարմինը երաշխավորում է կոռուպցիոն ռիսկերի դրսևորումները և դեպքերը ազդարարողների գաղտնիությունը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ



ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՅՈՂ ԽՄԲԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն չափորոշիչներով սահմանվում են Սևան համայնքում (այսուհետ՝ համայնք), սոցիալական աջակցության ոլորտում համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով, սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին սոցիալական ծառայություններ մատուցելու կարգավորումները, սոցիալական ծառայության տեսակները, աջակցություն ստանալու համար դիմած անձի (անձանց) կարիքների գնահատման չափորոշիչները, սոցիալական աջակցություն ստացող խմբերի ցանկը:

II. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՅՈՂ ԽՄԲԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

2. Աջակցությունից օգտվելու նպատակով համայնքի ղեկավարին կարող են դիմել.
 - 1) համայնքի բնակիչները, ովքեր հաշվառված են կամ վերջին 2 տարում փաստացի բնակվում են համայնքում,
 - 2) Արցախի Հանրապետությունից տեղահանվածները, ովքեր փաստացի բնակվում են համայնքում:
 3. Դիմումը ներկայացվում է համայնքապետարանի աշխատակազմ, հետևյալ եղանակով.
 - 1) անձամբ՝ դիմումի հետ ներկայացվում են ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը (տես՝ Ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթեր բաժինը)
 - 2) փոստով՝ դիմումի հետ ներկայացվում են ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը (տես՝ Ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթեր բաժինը)
 - 3) էլեկտրոնային՝ դիմումը հնարավոր է ուղարկել նաև համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով կամ համայնքապետարանի պաշտոնական կայքի միջոցով դիմումի հետ ներկայացվում են ծառայության

տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը (տես՝ Ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթեր բաժինը:

4. Դիմումին կցվում են սոցիալական վիճակը հավաստող հետևյալ փաստաթղթերը.
 - 1) դիմումատուի անձը հաստատող փաստաթղթի պատճենը.
 - 2) տեղեկանք դիմումատուի բնակության վայրից՝ ընտանիքի կազմի մասին (անհրաժեշտության դեպքում).
 - 3) բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովի որոշման պատճենը,
 - 4) բժշկական հաստատությունից տեղեկանք հիվանդության մասին կամ քաղվածք ամբուլատոր քարտից (առկայության դեպքում) .
 - 5) սոցիալական անապահով վիճակը հիմնավորող փաստաթուղթը՝ տրված սոցիալական աջակցության տարածքային գործակալության կողմից (անհրաժեշտության դեպքում).
 - 6) կյանքի դժվարին իրավիճակում գտնվելու հանգամանքը հավաստող փաստերը հիմնավորող փաստաթղթեր (դժբախտ պատահար կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու, ընտանիքի անդամի կորուստ, բնական կամ տեխնածին աղետի պատճառած վնաս, առանց ծնողական խնամքի մնալու և այլ).
 - 7) փոստային եղանակով դիմում ներկայացնելու դեպքում՝ դիմումը պետք է լինի ստորագրված և դիմումին կցվում են սույն մասում ներկայացված փաստաթղթերի պատճենները.
 - 8) էլեկտրոնային եղանակով դիմում ներկայացնելու դեպքում՝ դիմումը պետք է լինի ստորագրված և դիմումին կցվում են սույն մասում ներկայացված փաստաթղթերի սքանավորված տարբերակները:
5. Տրամադրվող սոցիալական աջակցության տեսակը և աջակցություն ստացող խմբերը
 - 1) Օգնություն՝ սննդի, դեղորայքի, հագուստի, կենցաղային անհրաժեշտ իրերի ձեռք բերման համար, կոմունալ սպասարկման վճարների փոխհատուցման, մահվան դեպքում ընտանիքի անդամներին աջակցության ցուցաբերում հետևյալ խմբերին պատկանող անձանց ընտանիքներին:
 - ա) Ընտանիքում խնամառու (անչափահաս, հաշմանդամության 1-ին, 2-րդ խումբ ունեցող, 75 և ավելի տարեկան), կամ ոչ աշխատունակ անձանց և աշխատունակների հարաբերակցության բարձր ցուցանիշի առկայություն ունեցող անձանց:
 - բ) Միայնակ կամ անժառանգ տարեցներին,
 - գ) Հաշմանդամության առաջին կամ երկրորդ խումբ կամ ֆունկցիոնալության ծանր կամ խորը սահմանափակում ունեցող անձանց,
 - դ) Հրատապ արձագանք պահանջող իրավիճակում հայտնված անձանց
 - ե). Ծնողազուրկ կամ միակողմանի ծնողազուրկ երեխաներին,
 - զ) Միայնակ մոր երեխաներին
 - է) Փախստական կամ տեղահաված ընտանիքներին

Աջակցությունը կամ հատուցումը տրամադրվում է համապատասխան քարտերի միջոցով:

6. Տրվող աջակցության տեսակները, պայմանները և գումարը սահմանվում են սոցիալական ծրագրերի անձնագրերով:
7. Դրամական հատուցում տրամադրվում է կազմակերպություններին՝ դրանց կողմից մատուցված ծառայությունների ամբողջական կամ մասնակի հատուցման նպատակով դրամական փոխանցումների միջոցով:
- Դրա անհնարինության դեպքում դրամական հատուցման համար դիմած կամ ստացած անձը հիմնավորում է հատուցման հանգամանքը համապատասխան անդորրագրերով:
8. Հատուցումը տրամադրվում է բնակչի դիմումի համաձայն՝ հիմք ընդունելով սոցիալական աշխատողի կողմից կարիքի գնահատման արդյունքները և ներկայացված համապատասխան անդորրագիրը:
9. Դրամական հատուցումը կարող է տրամադրվել մեկ տարվա ընթացքում մեկ անգամից ավելի անգամ:
10. Հանձնաժողովի տված դրական եզրակացության հիման վրա համայնքի ղեկավարի կողմից կայացվում է սոցիալական աջակցություն տրամադրելու մասին որոշում: Հանձնաժողովի տված բացասական եզրակացության դեպքում դիմումատուն գրավոր տեղեկացվում է:
11. Համայնքում սոցիալական աջակցության տրամադրման յուրաքանչյուր գործընթաց կազմակերպվում և իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վարչական վարույթի շրջանակներում:
12. Սոցիալական աջակցություն ստանալու վերաբերյալ դիմումները քննարկվում և դրանց վերաբերյալ որոշումները ընդունվում են 30 աշխատանքային օրվա ընթացքում:



Հավելված 1
 Սևան համայնքի ավագանու
 12.02.2025 թվականի N 23-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈՂԻ ՀԱՐԿ

Հ/Հ	Հարկատուի անուն, ազգանունը	Հողի գտնվելու հասցեն	Մայր գումար	Տույժ/դրամ/
1	Խաչիկ Շահբազյան	Վարսեր		19570 դրամ
2	Հայկ Ներսիսյան /մահացած/	Դդմաշեն		4609 դրամ
3	Լիազոր Ներսեսյան /մահացած/	Դդմաշեն		10914 դրամ
4	Մնացական Վարդանյան	Դդմաշեն		3754 դրամ
5	Ժորա Ղարիբյան	Չկալովկա		70515 դրամ
6	Սարգիս Մալխասյան	Ղ, Ալիշան 17		12503 դրամ
7	Սարգիս Մալխասյան	Չարենց 108		10276 դրամ
8	Համլետ Հովհաննիսյան	Մարզպետունի 6/2		6454 դրամ

ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ԾԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Հ/Հ	Հարկատուի անուն, ազգանունը	Գույքի հասցեն	Մայր գումար	Տույժ /դրամ/
1	Սիմոն Հայթյան	Նաիրյան 64/102		5883 դրամ
2	Համլետ Հովհաննիսյան	Մարզպետունի 6/2		5306 դրամ
3	Արայիկ Թադևոսյան	Խաղաղության 6/26		4101 դրամ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿ /ԱԳՀ/


Հ/Հ	Հարկատուի անունը, ազգանունը	Գույքի հասցեն	Մայր գումար /դրամ/	Տույժ /դրամ/
1	Հայկ Ներսիսյան /մահացած/	Դդմաշեն		3790 դրամ
2	Լիազոր Ներսեսյան /մահացած/	Դդմաշեն		8108 դրամ
3	Մնացական	Դդմաշեն		4769 դրամ

	Վարդանյան			
4	Սարգիս Մալխասյան	Չարենց 108		1995 դրամ
5	Սարգիս Մալխասյան	Ղ, Ալիշան 17		8632 դրամ
6	Էդվարդ Մարգարյան	Լճաշեն		2967 դրամ
7	Ժորա Ղարիբյան	Չկալովկան		20150 դրամ
8	Գուրգեն Շահբազյան	Վարսեր		2770 դրամ

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿ

Հ/Հ	Փոխադրամիջոցի սեփականատիրոջ անուն, ազգանուն	Փոխադրամիջոցի մակնիշը	Փոխադրամիջոցի պետհամարանիշը	Մայր գումար	Տույժ /դրամ/
1	Դավիթ Առաքելյան	INFINITI M45	36MP748		74164 դրամ 2020թ 158830 դրամ 2021թ
2	Մուրադ Բադալյան/մահացած/ Վարսեր	Vaz21099	34av999		20656 դրամ 2020թ 5654 դրամ
3	Ռուբեն Ստեփանյան	BMW 535I	30GG535		31317 դրամ
	Հայկ Առաքելյան	INFINITI	36MP748		74164 դրամ 2020թ 158830 դրամ 2021-ից

Հավելված 2
 Սևան համայնքի ավագանու՝
 12.02.2025 թվականի N 23-Ա որոշման



ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՂԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ
 ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ/Հ	Հարկատուի անուն ազգանուն	Հողի գտնվելու հասցեն	Զիջված մայր գումար /դրամ/	Զիջված տույժի չափը / դրամ/
1	Արսեն Զաքարյան	Գ. Ծաղկունք	0	142692
2	Անահիտ Հարությունյան	Գ. Ծաղկունք	0	8309
3	Խաժակ Զաքարյան	Գ. Ծաղկունք	0	107648
4	Աիդա Գրիգորյան	Գ. Ծաղկունք	0	123971
5	Անդրանիկ Ղազարյան	Գ. Ծաղկունք	0	5688
6	Միշա Պապոյան	Գ. Ծաղկունք	0	40000
7	Հովիկ Գալստյան	Գ. Ծաղկունք	0	40002
8	Մամիկոն Սարգսյան	Գ. Ծաղկունք	0	7211
9	Խաչիկ Հովհաննիսյան	Գ. Ծաղկունք	0	51000
10	Արուս Ավագյան	Գ. Ծաղկունք	0	80156
11	Անահիտ Հովհաննիսյան	Գ. Ծաղկունք	0	61000
12	Հովիկ Վանուշյան	Գ. Ծաղկունք	0	40004
13	Արկադի Գևորգյան	Գ. Ծաղկունք	0	30000
14	Հարություն Գևորգյան	Գ. Ծաղկունք		37000
	Ընդամենը			774681